ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-996[2]-02.05.2016,13.10.2016-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 18-րդ հոդվածի 4-րդ մասում «մարդու իրավունքների պաշտպանին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ իրավասու պետական ծառայողները և հայեցողական պաշտոն զբաղեցնող իրավասու անձինք, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ			
ՀՀ կառավարություն	1. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է. «Պաշտպանը Սահմանադրության 191-րդ հոդվածով նախատեսված պաշտոնատար անձն է»: Անհասկանալի է նման նորմի սահմանման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով այն, որ այն որևէ նոր կարգավորում չի պարունակում:	**Ընդունվել է:**	**Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտպանը անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց,**

			իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը»:
	2. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը բավարար տարբերակում չի կատարում Պաշտպանի՝ որպես Օմբուդսմենի գործառույթների եւ Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի հատուկ գործառույթների (այսուհետ՝ ԿԱՄ) միջև: Շարադրանքը պետք է արտացոլի ԿԱՄ-ի՝ Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության (ԽԴԿԿԱ) մեջ ներառված՝ ԿԱՄ-երի վերաբերյալ ուղեցույցի 32-րդ հոդվածով շեշտադրված անկախ դերը:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվու-**

	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է համապատասխանաբար փոփոխվի՝ ավելացնելով *«Պաշտպանին պետք է վերապահվի ԿԱՄ-ի մանդատ»* շարադրանքը, ինչպես առաջարկվել է 2015 թվականի եզրակացությունում:		**թյունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը (այսուհետ՝ կանխարգելման ազգային մեխանիզմ)»:**
	3. Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ մարդու իրավունքների պաշտպանն *«իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մոնիթորինգ, ինչպես նաեւ երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում եւ պաշտպանություն:»* Գործունեության այս երրորդ շրջանակը տեքստում որեւէ այլ տեղ նշված չէ: Այս կոնկրետ իրավասությունը պետք է սահմանվի/մշակվի սահմանադրական օրենքի նախագծի հիմնական մասում:	**Ընդունվել է:**	**Նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 30-րդ հոդվածով՝ «Հոդված 30. Պաշտպանի լիազորությունները երեխաների իրավունքների պաշտպանության հարցում 1.Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Պաշտպանն իրավասու է՝**

			1) իրականացնել օրենսդրության՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթներին համապատասխանության մշտադիտարկում. 2) իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ: Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցելությունների ժամանակի և նպատակի մասին. 3) հանդես գալ երեխայի իրավունքներին

			առնչվող հատուկ հրապարակային զեկույցներով. **4) իրավասու մարմիններին ներկայացնել երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի վերաբերյալ առաջարկություններ.** **5) իրականացնել սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:**
	4. Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկվում է ավելացնել թափանցիկության սկզբունքը: Պարզ չէ Նախագծի 3-րդ հոդվածում հանրաճանաչ սկզբունքների ամրագրման անհրաժեշտությունը (օր.՝ «օրինականության սկզբունքը»), քանի որ նույնիսկ առանց նախագծում սահմանելու էլ այդ սկզբունքները գործելու են Սահմանադրության ուժով: Բացի այդ, որոշ սկզբունքների ամրագրումն ընդհանրապես անհասկանալի է: Օրինակ՝ պարզ չէ, թե Պաշտպանն ինչպե՞ս է իր գործունեության ընթացքում ղեկավարվելու «ժողովրդավարության սկզբունքով», իսկ «մարդասիրության» սկզբունքի առումով ստացվում է, որ միայն	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություններ և լրացում: Նախագծի 3-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝** **«Պաշտպանն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է, անկողմնակալության, հրապարակայնության, թափանցիկության և Հայաստանի**

	Պաշտպանն է մարդասիրության սկզբունքով առաջնորդվում: Բացի այդ, անորոշ է այդ սկզբունքների նորմատիվ բովանդակությունը:		**Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված այլ սկզբունքներով»:**
	5. Անհրաժեշտ է Նախագծում ներառել դրույթներ, որոնք հնարավորություն կտան ունենալ մարդու իրավունքների պաշտպանի մարզային ներկայություն կամ Օմբուդսմենի մարզային գրասենյակներ՝ երկրի ամբողջ տարածքում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ մատչելիություն ապահովելու նպատակով:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
ՀՀ կառավարություն, ՀՀ ԱԺ պատգամավոր Էդմոն Մարուքյան	6. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ քվեարկության» բառերը:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
ՀՀ կառավարություն	7. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Պաշտպանի նկատմամբ քրեական հետապնդում, *ինչպես նաև դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց* կարող է հարուցվել միայն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնությամբ»: Մեջբերված դրույթը՝ Պաշտպանի նկատմամբ *դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց* հարուցելու համար Ազգային ժողովի համաձայնության պահանջ նախատեսելու մասով, հակասության մեջ է մտնում 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահ-	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**

	մանադրության 96-րդ հոդվածի 2-րդ և 193-րդ հոդվածի 1-ին մասերի հետ: Այսպես՝ հիշատակված 193-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության ուժով Պաշտպանի վրա տարածվում է *պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիության իրավունքը:* Պատգամավորի անձեռնմխելիությանն առնչվող կարգավորումներն, իրենց հերթին, ամրագրված են 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածում, որի 2-րդ մասում Ազգային ժողովի համաձայնության առկայությունը պարտադիր նախապայման է միայն պատգամավորի նկատմամբ *քրեական հետապնդում հարուցելու* և նրան *ազատությունից զրկելու* համար, իսկ պատգամավորին *դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու* վերաբերյալ որևէ դրույթ առկա չէ, որպեսզի այն համարժեքորեն տարածելի լիներ նաև Պաշտպանի նկատմամբ:		
	8. Նախագծում ավելացնել հստակ դրույթներ մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի կողմից օգտագործվող հաղորդակցության միջոցների անձեռնմխելիության վերաբերյալ:	**Ընդունվել է:**	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: Նախագծի 6-րդ հոդվածի լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով՝ «Պաշտպանի՝ իր լիազորությունների իրականացման հետ

			կապված նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական հողորդումները և հաղորդակցության այլ ձևերը ենթակա չեն վերահսկման: Պաշտպանի՝ իր լիազորությունների իրականացման հետ կապված ուղեբեռը ենթակա չէ վերահսկման, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պայմանավորված է հանցագործությունների կատարումը կանխելու կամ հանցագործությունների բացահայտման համար:»: Իսկ Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝ «Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների՝ իր լիազորությունների իրակա-

			նացման հետ կապված նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական հողորդումները և հաղորդակցության այլ ձևերը կարող է վերահսկվել Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:»:
	9. Սահմանադրության փոփոխությունների 193-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը պետք է կրկնվի Նախագծի 6-րդ հոդվածում, որպեսզի օրենքը կարդալիս կարդացողը կարողանա ամբողջական պատկերացում կազմել Պաշտպանին վերաբերող բոլոր դրույթների մասին:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:**
	10. Նախագծի 8-րդ հոդվածում անհարժեշտ է նախատեսել այնպիսի կարգավորումներ, որ ապահովվի Պաշտպանի մասնակցությունը ԱԺ-ում բյուջեի իրեն վերաբերող հատվածների քննարկմանը:	**Ընդունվել է:**	**Նախագծի 8-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրվել է հետևյալ խնբագրությամբ՝ «Պաշտպանը մասնակցում է Ազգային ժողովում «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ Պաշտպանի և**

			նրա աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման վերաբերող հատվածների քննարկմանը»:
	11. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասից ամբողջությամբ պարզ չէ, թե ՄԻՊ-ի՝ որպես ԿԱՄ-ի գործունեությունը ֆինանսավորվում է ամբողջովին առանձին կարգով (այսինքն՝ պետական բյուջեի՝ Պաշտպանի հիմնական գործունեության վերաբերյալ բյուջետային տողից առանձին տողով), թե դրանք ֆինանսավորվում են առանձին, սակայն Պաշտպանի գործունեության բյուջետային տողի կազմում: Այս խնդիրը պետք է տեքստում հստակեցվի	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրվել է հետրյալ խմբագրությամբ՝ «Նույն տողով հատուկ ֆինանսավորվում է նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեությունը»:**
	12. Անհրաժեշտ է Նախագծում ներառել Պաշտպանի ֆինանսական անկախության ապահովման լրացուցիչ երաշխիքներ:	**Ընդունվել է մասնակի:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրվել է հետևյալ**

			խմբագրությամբ՝ «Յուրաքանչյուր տարի Պաշտպանի և նրա աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից: Պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումը կատարվում է ամսական հավասար համամասնությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար կանխավճարի կարգով»:
	13. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, դրանց պաշտոնատար անձինք կամ ներկայացուցիչները	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում «անարգել» բառը

	պարտավոր են օրենքով սահմանված կարգով Պաշտպանին անվճար և *անարգել* տրամադրել անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ: Անհասկանալի է «անարգել» հասկացության իմաստը տվյալ կարգավորման համատեքստում: Պարզ չէ, թե նշված եզրույթն ինչպիսի գործողություններ է ենթադրում, որոնք պետք է իրականացվեն նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ տրամադրելիս:		փոխարինվել է «հնարավոր կարճ ժամկետում» բառերով
	14. Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասում կիրառվում է «արագ արձագանքման դեպքում» արտահայտությունը, որը նույնպես հստակ չէ և կարող է տարաբնույթ ընկալվել: «Արագ» բառը կարող է տարբեր կերպ գնահատվել տարբեր անձանց կողմից, ինչի արդյունքում վերոնշյալ դրույթի կիրառումը հիմնված կլինի սուբյեկիվ մեկնաբանությունների վրա, ինչն ընդունելի չէ:	Ընդունվել է:	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտպանի պահանջի դեպքում սույն մասում նշված մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք և ներկայացուցիչները պարտավոր են Պաշտպանին կամ նրա ներկայացուցիչներին տրամադրել անհապաղ աջակցություն:»
	15. Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասով	Ընդունվել է:	Նախագծում կատարվել

	նախատեսված երաշխիքը տարածել նաև Պաշտպանի պատասխան գրությունների և այլ փաստաթղթերի վրա:		**է համապատասխան փոփոխություն:**
ՀՀ կառավարություն, ԱԺ պատգամավոր Էդմոն Մարուքյան	**16. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում առաջարկվում է «օրենքով նախատեսված պատասխանատվության» բառերը փոխարինել համապատասխանաբար «քրեական պատասխանատվության» և «վարչական պատասխանատվության» բառերով:**	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
	17. Նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանվում է, որ Ազգային ժողովի նախագահը Պաշտպանի լիազորությունների դադարման դեպքերում համապատասխան տեղեկատվությունը ստանալու պահից հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ օրը պաշտոնական հաղորդագրություն է հրապարակում Պաշտպանի լիազորությունները *վաղաժամկետ դադարելու* մասին:Հարկ է նշել, որ՝ համաձայն նույն հոդվածի 1-ին մասի՝ Պաշտպանի լիազորությունների դադարման հիմք է նաև Պաշտպանի *լիազորությունների ժամկետն ավարտվելը*, իսկ այդ դեպքում խոսք չի գնում Պաշտպանի լիազորությունների *վաղաժամկետ* դադարման մասին:	**Ընդունվել է:**	**Նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ լիազորությունների ժամկետն ավարտվելու հիմքի, համապատասխան տեղեկատվությունը ստանալու պահից հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ օրը պաշտոնական հաղորդագրություն է**

			հրապարակում Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարելու մասին: Հրաժարականի դեպքում սույն մասում նշված հաղորդագրությունը հրապարակվում է Պաշտպանի կողմից կրկին հրաժարականի դիմում ներկայացնելուց հետո:»:
	18. Անհրաժեշտ է Նախագծով նախատեսել Պաշտպանի լիազորությունների դադարեցման ժամանակ Պաշտպանի գործունեության մասին Խորհրդարան հաշվետվության ներկայացնելու եւ այն հրապարակելու վերաբերյալ դրույթ:	Ընդունվել է:	Նախագծում է կատարվել է համապատասխան լրացում: Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվել է հեևյալ բովանդակության նոր նախադասությամբ՝ «Հրաժարականի հիմքով Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Պաշտպանը հրապարակում և Ազգային ժողով է ներկայացնում իր՝ հերթական տարեկան հաղորդումը ներկայաց-

			նելուց հետո մինչև հրաժարականի դիմում ներկայացնելը ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության վերաբերյալ հաշվետվություն»:
	19. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է քննարկել *«պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների» կողմից կատարված խախտումները*: Կարծիք է ստեղծվում, որ Պաշտպանը դատական մարմնի իրավասություններ ունի: Դա չպետք է այդպես լինի, քանի որ սկզբունքայնորեն օմբուդսմենը չպետք է (որոշակի բացառություններով, որոնք հիմնականում կապված են դատական մարմնի ընդհանուր գործունեության հետ) դատական մարմնի նկատմամբ ունենա իրավազորություն: Սահմանադրական օրենքի նախագծի որոշ դրույթներ (օրինակ 22-րդ հոդվածի 3-րդ մասը) կարող են ուղղված լինել այս սկզբունքի արտացոլմանը, սակայն սահմանադրական օրենքի նախագիծն այս կարեւոր առումով	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և լրացում: Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, բացառությամբ դատարանների ու դատավորների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակեր-

	պետք է շատ հստակ լինեն:		**պությունների կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումներ»:**
	20. Նախագծի 15-րդ հոդվածը վերաբերում է *«մարդու իրավունքների եւ ազատությունների խախտմանը»,* մինչդեռ 16-րդ հոդվածը (Պաշտպանին դիմելը) վերաբերում է *«Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և ազատությունների» խախտմանը:* Առաջին հասկացությամբ կարծես թե սահմանվում է ավելի բարձր սանդղակ՝ ի տարբերություն երկրորդի: Օգտակար կլիներ ներդաշնակեցնել այս երկու դրույթները: Նախընտրելի է 17-րդ հոդվածը սահմանել ավելի լայն իմաստով:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
	21. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «բացառիկ» բառը, քանի որ այն անհարկի սահմանափակում է Պաշտպանի գործելու հնարավորությունը:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
	22. Նախագծի 16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ խնամակալության և հոգաբարձության մար-	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Բացի այդ, Նախագծի 16-րդ հոդվա-**

	մինների, չեն կարող Պաշտպանին բողոքներ ներկայացնել:Նախ՝ պարզ չէ, թե ինչո՞ւ է հատուկ շեշտվում, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող Պաշտպանին բողոքներ ներկայացնել, քանի որ պարզ է, որ այդ մարմինները չեն կարող լինել մարդու և քաղաքացու իրավունքների կրողներ: Բացի այդ, նույն հոդվածի 1-ին մասում արդեն իսկ ամրագրված է, թե ովքեր կարող են դիմել Պաշտպանին, ինչը նշանակում է, որ մնացած բոլորը չեն կարող: Պարզ չէ նաև, թե ինչո՞ւ է բացառություն սահմանվում խնամակալության և հոգաբարձության մարմինների համար:		**ծի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող է դիմել այդ անձի ներկայացուցիչը, նրա իրավահաջորդը, ժառանգը, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների, անգործունակ և սահմանափակ գործունակ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով»:**
	23. Վերանայել Նախագծի 16-րդ հոդվածն այն առումով, որ պաշտոնատար անձինք կարող են ոչ միայն որպես ֆիզիկական անձ, ցանկանալ բողոք ներկայացնել օմբուդսմենին նաև իրենց ծառայության հետ կապված հարցերով, օրինակ՝ իրենց աշխատավարձի կամ կարգապահական միջոցների և կամ համակարգում առկա թերությունների վերաբերյալ հարցերով, եթե դրանք կապված են մարդու իրավունքների հետ (օրինակ՝ «խախտումների մասին տեղե-	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի 16-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Պետական և տեղական ինքնակառավարման**

	կացնող անձինք»):		**մարմինների պաշտոնա-տար անձինք իրավունք ունեն դիմելու Պաշտպա-նին՝ պաշտոնական լիա-զորությունների իրակա-նացման հետ չկապված իրենց խախտված իրա-վունքների և ազատու-թյունների պաշտպանու-թյան նպատակով»:**
	24. Անհրաժեշտ է սահմանել Պաշտպանի՝ դիմողին այն մասին տեղեկացնելու պար-տավորությունը, որ Պաշտպանին բողոք ներկայացնելու հանգամանքը չի կասեցնում դատարան հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը, և որ դիմողը պետք է պատշաճ կերպով ուշադրություն դարձնի իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառմանը:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատար-վել է համապատասխան լրացում: Նախագծի 20-րդ հոդվածը լրացվել է հետյալ բովանդակու-թյամբ նոր՝ 3-րդ մասով «. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ Պաշտպանը բողոքը ներկայացրած անձին ծանուցում է առ այն, որ Պաշտպանին բողոք ներկայացնելը չի կասեց-նում իր խախտված իրա-վունքների և ազատու-թյունների պաշտպանու-թյան համար իրավասու**

			մարմին կամ դատարան դիմելու համար սահմանված ժամկետները:»:
	25. Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ *«Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պահանջ չեն բովանդակում կամ չեն վկայում մարդու իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման մասին կամ բողոքի բովանդակությունից պարզ չէ, թե որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կազմակերպության կամ դրանց պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի կողմից է խախտվել բողոք ներկայացրած անձի իրավունքը»:* Անհրաժեշտ է Նախագծում սահմանել, որ եթե Պաշտպանը բողոքն ակնհայտորեն անընդունելի չի համարում, ապա ոչ թե պետք է մերժի այդ բողոքների քննարկումը, դիմողին ընձեռի բացակայող տեղեկությունները կամ տվյալները սահմանված ժամկետում ներկայացնելու հնարավորություն:	**Ընդունվել է:**	Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանաբար շարադրվել են հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտպանը կարող է չքննարկել այն բողոքները, որոնք անանուն են, ինչպես նաև այն բողոքները, որոնք տրվել են մեկ տարուց ավելի ուշ այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների և ազատությունների խախտման մասին՝ բացառությամբ, երբ Պաշտպանը հարգելի է ճանաչում ժամկետը բաց թողնելու պատճառները: Բողոքը չի քննարկվում այն դեպքում, երբ պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են», «Պաշտպանը կարող է

			չքննարկել այն բողոք-ները, որոնք պահանջ չեն բովանդակում կամ չեն վկայում մարդու իրա-վունքների կամ ազատու-թյունների ենթադրյալ խախտման մասին կամ բողոքի բովանդակությու-նից պարզ չէ, թե որ պե-տական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կազմակերպու-թյան կամ դրանց պաշտո-նատար անձի կամ եր-կայացուցչի կողմից է խախտվել բողոք ներկա-յացրած անձի իրավուն-քը»:
	26. Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունը՝ *«... հայց կամ բողոք է ներկայացրել դատարան»* պետք է փոխարինվի *«... նույն խնդրով դիմել է դատարան»* բովանդակությամբ նախադա-սությամբ՝ այն ավելի հստակ դարձնելու նպատակով:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախա-դասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Բողոքը չի քննարկվում, իսկ բողոքի կապակցու-**

			թյամբ սկսված քննարկումը դադարեցվում է նաև այն դեպքում, երբ բողոք ներկայացնելուց հետո շահագրգիռ անձը բողոքում նշված նույն հիմքով և առարկայով հայց կամ բողոք է ներկայացրել դատարան կամ առկա է նույն հիմքով և նույն առարկայով հայցի կամ բողոքի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ»:
	27. Նախագծով նախատեսվում է բողոքի քննարկումը մերժելը, եթե դիմողը բողոքը Պաշտպանին ներկայացնելուց *հետո* հայց է ներկայացրել դատարան: Նախագծով պետք է նաեւ նախատեսվեն այն դեպքերը, երբ տվյալ գործը Պաշտպանին ներկայացնելու պահին այն արդեն իսկ քննվել է կամ քննվում է դատարանի կողմից:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Բողոքը չի քննարկվում, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցվում է նաև այն

			դեպքում, երբ բողոք ներկայացնելուց հետո շահագրգիռ անձը բողոքում նշված նույն հիմքով և առարկայով հայց կամ բողոք է ներկայացրել դատարան կամ առկա է նույն հիմքով և նույն առարկայով հայցի կամ բողոքի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ»:
	28. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է քննարկման նպատակով փոխանցել նրան՝ հետևելով քննարկման ընթացքին: Անհասկանալի է, թե ի՞նչ է նշանակում և ի՞նչ գործողություններ է ենթադրում «հետևելու» լիազորությունը:	**Ընդունվել է:**	**Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը «նրան՝» բառից հետո շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «պարբերաբար տեղեկանալով հարցի քննարկման ընթացքի մասին»:**
	29. Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսվում է, որ Պաշտպանը կարող է պահանջել և ստանալ բողոքին առնչվող *«անհրաժեշտ»* նյութերը: Քանի որ այդպիսի դրույթները հաճախ տարբեր կերպով են մեկնաբանվում մարդու իրավունքների պաշտպանի և վարչական մարմինների կողմից, երկու հարց պետք է հստակեցվի՝ ոչ թե	**Ընդունվել է:**	**Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «առնչվող՝» բառից հետո լրացվել է «Պաշտպանի գնահատմամբ» բառերով:**

	վարչական մարմինը, այլ մարդու իրավունքների պաշտպանը պետք է որոշի, թե ինչպիսի նյութերն են «անհրաժեշտ»: Եթե Պաշտպանը պահանջում է իրեն տրամադրել որեւէ փաստաթուղթ, վարչական մարմինը չպետք է պնդի, որ այդ նյութերը *«անհրաժեշտ»* չեն:		
	30. Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում սահմանվում է, որ Պաշտպանը իրավասու է անարգել այցելել *ցանկացած* պետական և տեղական ինքնակառավարման մարմին կամ կազմակերպություն կամ *ցանկացած* պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից և կազմակերպությունից ստանալ համապատասխան տեղեկություններ կամ պարզաբանումներ: Սակայն Պաշտպանը պետք է հնարավորություն ունենա այցելել ոչ թե ցանկացած մարմին կամ կազմակերպություն, այլ *իրավասու* մարմին կամ կազմակերպություն, այսինքն, այցելել այն մարմին կամ կազմակերպություն, որը համապատասխան իրավասություն ունի բողոքում նշված հարցերի առնչությամբ:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
	31. Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում իր իրավասությունների շրջանակում Պաշտպանը լիազորված է դիմել *ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ*՝ դատական պրակտիկայում առաջացող իրավական հարցերի վերաբերյալ	**Ընդունվել է:**	**Նախագծի 24-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ» բառերը փոխարինվել են՝ «դատական իշխա-**

	խորհրդատվական բնույթի պարզաբանումներ ստանալու նպատակով, ինչպես նաև առաջարկներ ներկայացնել դատական պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ: Այս առումով հարկ է նկատել, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածում ամրագրված է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների բաց ցանկ՝ վերջինիս *այլ լիազորությունները և գործունեության կարգը* սահմանելու հնարավորություն նախատեսելով *Դատական օրենսգիրք* սահմանադրական օրենքով: Ուստի՝ հարցը պետք է լուծում ստանա մշակվելիք Դատական օրենսգրքի հայեցակարգային մոտեցումների շրջանակներում, այլ ոչ թե այն պետք է կանխորոշվի Նախագծով: Հետևաբար, մինչև Դատական օրենսգրքի ընդունումը՝ անցումային փուլի համար, անհրաժեշտ է նշել միայն պարզաբանումներ տալու իրավասություն ունեցող մարմնի մասին՝ առանց մանրամասնելու այդ մարմնի անվանումը և գործառույթները:		**նության՝ դատական պրակտիկայի ամփոփման համար պատասխանատու մարմիններին» բառերով:**
	32. Նախագծի 24-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետով նախատեսված լիազորություն հանել:	**Ընդունվել է:**	**Նախագծից համապատասխան նորմը հանվել է:**
	<u>33. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասում</u> (Բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման արդյունքում պաշտպանի կողմից ընդունվող	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**

	որոշումները) նշվում է դատարան հայց ներկայացնելու իրավունքը, սակայն չի նշվում նոր Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսվող՝ մարդու իրավունքների պաշտպանի՝ *«Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»* Սահմանադրական դատարան դիմելու հնարավորության մասին: Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրա-կան դատարան դիմելու իրավասությունը պետք է հստակ նշվի Նախագծում՝ այդ օրենքում Պաշտպանի իրավասությունները համահունչ կերպով ներկայացնելու նպատակով:		
	34. Նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրվում է, որ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ՝ Պաշտպանն իրավասու է իրականացնել «... սույն օրենքով և *«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ստորագրված կամընտիր արձանագրությամբ սահմանված այլ լիազորություններ»*: Այս կարգավորումը	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**

	շեղվում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, որոնց համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար *լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:* Բացի այդ, հիշյալ դրույթը հակադրվում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի 4-րդ մասին, որով հստակ ամրագրված է, որ Պաշտպանի *այլ լիազորությունները սահմանվում են Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով:*		
	35. Նախագծի սահմանվում է, որ փորձագետները կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքներին ներգրավվում են Պաշտպանի *հրամանով՝ նրանց հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա*: Եթե խոսքը աշխատանքային հարաբերությունների մասին է, ապա հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածով աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահման-	Ընդունվել է:	Նախագծի 28-րդ հոդվածի 6-րդ մասի հանվել են «Պաշտպանի հրամանով՝» բառերը:

	ված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով *կամ* աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով: Իսկ, եթե խոսքը (նաև) քաղաքացիաիրավական հարաբերությունների մասին է (օրինակ՝ ծառայությունների մատուցման պայմանագրի), ապա անհրաժեշտ է հստակեցնել այդ հանգամանքը՝ առանց Պաշտպանի հրամանի հիշատակման:		
	36. Նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող *նորմատիվ իրավական ակտերի* նախագծերը, մինչև դրանց ընդունումը, սահմանված կարգով ուղարկվում են Պաշտպանին՝ կարծիքի: Նախ՝ հարկ է նկատել, որ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի շրջնառությանն առնչվող կարգի կամ դրա տարրերի սահմանումը դուրս է Նախագծի կարգավորման շրջանակներից: Անհրաժեշտ է պարզապես ամրագրել Պաշտպանի լիազորությունը՝ կարծիք տալու համապատասխան նախագծերի վերաբերյալ: Բացի այդ, հարկ է նշել նաև, որ ՀՀ Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված՝ ՀՀ կառավարության և	**Ընդունվել է:**	**Նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը, դրանց վերաբերյալ, իրավասու մարմնին ներկայացնելու գրավոր կարծիք:»**

	նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետով Պաշտպանին կարծիքի ներկայացնելու պարտադիր պահանջ է նախատեսված մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող *օրենքների* նախագծերի մասով՝ նախքան դրանք ՀՀ կառավարություն ներկայացնելը: Հետևապես, մինչև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության ամբողջությամբ ուժի մեջ մտնելը, երբ, ի թիվս այլոց, Կառավարության գործունեության կարգը կամրագրվի օրենքով (համաձայն հիշյալ խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 147-րդ հոդվածի 2-րդ մասի), այդ հարաբերությունների կարգավորումը ՀՀ Նախագահի բացառիկ լիազորությունն է՝ համաձայն 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասության:		
	37. Նախագծի 31-րդ հոդվածում պետք է նշվի, որ ՄԻՊ-ի՝ որպես ԿԱՄ-ի տարեկան զեկույցը պետք է հրապարակվի:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	38. Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ իրավասու պետական մարմիններին ու կազմակերպություններին	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	տարեկան զեկույցը ներկայացնելու և այն հրապարակելու հարցը թողնվում է Պաշտպանի հայեցողությանը, մինչդեռ նույն հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է, որ Պաշտպանն ապահովում է հաղորդումների և զեկույցների հրապարակայնությունը: Այս երկու դրույթներն ըստ երեւույթին հակասում են միմյանց և պետք է համապատասխանեցվեն: Բոլոր հաղորդումներն ու զեկույցները պետք է հրապարակվեն: Ուստի, առաջարկվում է Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասից հանել *«իր հայեցողությամբ»* բառերը:		
	39. Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասով Պաշտպանին հնարավորություն է ընձեռվում ներկա լինելու *ՀՀ կառավարության*, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նիստերին և ելույթ ունենալու, եթե քննարկվում են մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող հարցեր, *ինչպես նաև այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև սույն օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր:* Անհասկանալի է՝ Պաշտպանի կողմից ներկայացվելիք՝ խախտումների վերաբերյալ հարցերով արդյո՞ք դրանց հասցեատեր պաշտո-	**Ընդունվել է:**	**Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին մասը «ելույթ ունենալու» բառերից հետո լրացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգին համապատասխան,» բառերով:**

	նատար անձինք հնարավորություն ունենալու են արձագանքելու և, ըստ անհրաժեշտության, պարզաբանում ներկայացնելու, թե՝ ոչ: Բացի այդ, վերոնշյալ դրույթը՝ ՀՀ կառավարության նիստերին Պաշտպանի կողմից համապատասխան խախտումների վերաբերյալ հարցեր ներկայացնելու մասով, խնդրահարույց է Կարգի 78-րդ կետի տեսանկյունից, համաձայն որի՝ ՀՀ կառավարության նիստերին «*խորհրդակցական ձայնի իրավունքով* կարող են մասնակցել նաև ՀՀ օրենքներով ստեղծված մշտապես գործող հանձնաժողովների (ծառայությունների, խորհուրդների) ղեկավարները, … իսկ *Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձինք»:* Այսինքն՝ ՀՀ կառավարության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելուց զատ, որևէ այլ եղանակով այդ նիստերին միջամտելու հնարավորությունն *այլ անձանց,* այս պարագայում՝ Պաշտպանի համար, Կարգը բացառել է: Չնայած այն հանգամանքին, որ օրենքները գերակայում են ՀՀ Նախագահի հրամանագրերի նկատմամբ, այդուհանդերձ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կարգը սահմանելու լիազորությունը սահմանադիրը դեռևս գործող՝ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասով *անմիջականորեն*		

	վերապահել է ՀՀ Նախագահին՝ Կարգի շրջանակներից դուրս որևէ այլ ակտով որևէ այլ կարգավորումը կհակասի Սահմանադրության հիշյալ դրույթին:		
	40. Նախագծի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Պաշտպանի աշխատակազմն ապահովում է Պաշտպանի՝ ՀՀ Սահմանադրությամբ, այդ օրենքով և *այլ իրավական ակտերով* վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը: **Նշված դրույթը, այլ իրավական ակտերով Պաշտպանին լիազորություններ վերապահելու կարգավորման մասով, անհամատեղելի է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց *համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով*) և 191-րդ հոդվածի 4-րդ (մարդու իրավունքների պաշտպանի *այլ լիազորությունները սահմանվում են Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով*) մասերի պահանջների հետ:**	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
	41. Նախագծի 37-րդ հոդվածի 2-րդ, 38-րդ հոդվածի 1-ին և 39-րդ հոդվածի 2-րդ մասերի	**Ընդունվել է:**	**««Հանրային ծառայության մասին»**

	համադրված վերլուծությունից պարզ է դառնում, որ, մասնավորապես, Պաշտպանի՝ - աշխատակազմը կազմված է նաև երկու *դեպարտամենտից*, - աշխատակազմը *ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը*՝ քարտուղարության միջոցով, - աշխատակազմի *դեպարտամենտների*, կանխարգելման ազգային մեխանիզմի և մարզային ստորաբաժանումների ղեկավարները հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք են: Իսկ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարները ներառվում են նաև *բարձրաստիճան պաշտոնատար անձանց* ցանկում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ, ի տարբերություն Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածով կանխարգելման ազգային մեխանիզմի և մարզային ստորաբաժանումների ղեկավարները հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց թվում չեն հիշատակվում:		**Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի Նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում:**
	42. Նախագծի 38-րդ հոդվածի 1-ին մասի հա-	**Ընդունվել է:**	**Նախագծի 38-րդ**

	մածայն՝ Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումներն ապահովում են Պաշտպանի լիազորությունների արդյունավետ և լիարժեք իրականացումը, *որոնց իրավասությունը սահմանվում է Պաշտպանի կողմից:* Վերոնշյալ դրույթը նույնպես հակասում է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին: Եթե խոսքը վերաբերում է Պաշտպանի կողմից պարզապես իր աշխատակազմի ստորաբաժանումների միջև գործառույթները բաշխելուն՝ դրանց շրջանակների սահմանմամբ, ապա հիշյալ դրույթն անհրաժեշտ է վերանայել այն հաշվով, որպեսզի բացառվի անգամ ձևակերպման տեսանկյունից Սահմանադրության հետ անհամադրելի դրույթի առկայությունը:		**հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտպանի լիազորությունների արդյունավետ և լիարժեք իրականացումն ապահովում են Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումները, որոնց միջև գործառույթների բաշխումը կատարվում է Պաշտպանի կողմից:»:**
	43. Նախագծի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանի աշխատակազմի *դեպարտամենտների, կանխարգելման ազգային մեխանիզմի և մարզային ստորաբաժանումների ղեկավարները, Պաշտպանի խորհրդականները, օգնականները և մամուլի քարտուղարը համարվում են հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ովքեր իրականացնում են պետական ծառայություն:* Նախ՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի վերաբերելի դրույթների (մասնավորապես՝ 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, 4-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի) համեմատական	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**

	ուսումնասիրությունը վկայում է, որ պետական ծառայություն և հայեցողական պաշտոն հասկացությունները նույնական չեն, ուստի Նախագծով դրանց մեկտեղումը հակահամակարգային է և չարդարացված:		
	44. Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ և 3-րդ մասի 9-րդ կետերը, համապատասխանաբար քարտուղարության ղեկավարի և Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների լիազորությունների մասով, նույնպես վերանայման կարիք ունեն՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համահունչ:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել են համապխատասխան փոփոխություններ:**
	45. Նախագծով նախատեսվում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի ղեկավարի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման ղեկավարի և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանման ղեկավարի աշխատավարձերը կարգավորել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի՝ «*Բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող* քաղաքական, հայեցողական և այլ պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները» վերտառությամբ 1-ին հավել-	**Ընդունվել է:**	**«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:**

	վածով: Այս առումով հարկ է նշել, որ Պաշտ-պանի աշխատակազմի *բոլոր* ստորաբաժա-նումների ղեկավարներին, այլ ոչ թե միայն դեպարտամենտների ղեկավարներին, որոնք *փոխարինում են* Պաշտպանին օրենքով նախատեսված դեպքերում, բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերող հավել-վածում ներառելը նույնպես էապես շեղվում է հանրային ծառայության համակարգային տրամաբանությունից, հետևապես՝ անընդու-նելի է: Միաժամանակ հարկ է շեշտել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրեն-քում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրեն-քի նախագծով բարձրաստիճան պաշտոնա-տար անձանց թվում նախատեսվում է լրացնել միայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի ղեկավար-ներին, ինչն արդարացված է, քանի որ նրանք են փոխարինում Պաշտպանին օրենքով նախատեսված դեպքերում:		
	<u>46. Նախագծի 40-րդ հոդվածում</u> կարելի է հղում կատարել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին, քանի որ Նախագիծը չի կարգավորում Պաշտպանի աշխատավարձը:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:**
	47. Նախագծի 41-րդ հոդվածը *(Եզրափակիչ մաս) և* 42-րդ հոդվածը *(Անցումային դրույթ-ներ)* չպետք է ներառվեն 6-րդ գլխում	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:**

	(Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության առանձնահատկությունները), **այլ սահմանվեն «Եզրափակիչ և անցումնային դրույթներ» վերտառությամբ առանձին (նոր) գլխում**		
ՀՀ ԱԺ պատգամավոր Էդմոն Մարուքյան	**48. Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսել Պաշտպանի՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համապատասխան պաշտոնատար անձին աշխատանքից հեռացնելու առաջարկությամբ հանդես գալու լիազորություն:**	**Չի ընդունվել: Նախագծից նշված նորմը հանվել է:**	
ՀՀ ԱԺ պատգամավոր Էդմոն Մարուքյան	**49. Նախագծի անցումնային դրույթներում նախատեսել Նախագծով սահմանված՝ Պաշտպանի՝ օրենքի նախագծերի վերաբերյալ կարծիք ներկայացնելու համանման լիազորություն մարդու իրավունքներին և ազատությունների առնչվող արդեն իսկ գործող օրենքների առնչությամբ:**	**Չի ընդունվել: Արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած և գործող օրենքներում մարդու իրավունքներին և ազատություններին հակասող կարգավորումների առկայության պարագայում՝ Պաշտպանը կարող է իրացել ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իր լիազորությունը:**	
ՀՀ Կառավարություն	**Նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասը, որը խոսում է Պաշտպանի լիազորությունների ավարտին նախորդող 50 օրվա ընթացքում Պաշտպանի հերթական ընտրությունների**	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**

	անցկացման մասին, անհրաժեշտ է համա-պատասխանեցնել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 138-րդ հոդվածի, ինչպես նաև շրջանառության մեջ դրված Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ օրենքի նախագծի ժամկետներին:		
	50. Ազգային ժողովի կողմից ընտրված կամ նշանակված պաշտոնատար անձանց հրա-ժարականի հետ կապված հարցերը մեկ միասնական մոտեցումով ամրագրվել է շրջանառության մեջ դրված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի նախագծում: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է Նախագծի 13-րդ հոդվածի հրաժարականին վերաբերող դրույթները հանել կամ ժամկետների առումով համապատասխանեցնել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի նախագծին:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	51. Պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողների վարձատրության և հավելավճարին վերաբերող դրույթները, մասնավորապես 40-րդ հոդվածը անհրաժեշտ է համապատասխանեցնել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքին, մասնավորապես 7-րդ հովածի 5-րդ մասին կամ լրացումներ կատարել նշված օրենքում պետական պաշտոններ	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	զբաղեցնող անձանց վարձատրության և հավելավճարի միասնականությունն ապահովելու նպատակով: Բացի այդ, Պաշտպանի աշխատակազմի գործունեության արդյունավետության և ճկունության տեսանկյունից այնքան էլ նպատակահարմար չէ աշխատակազմին վերաբերող դրույթները ամրագրել սահմանադրական օրենքում:		
ԱԺ պատգամավոր Հովհաննես Սահակյան	52. Անհրաժեշտ է քննարկել Նախագծի 1-ին հոդվածում և ընդհանրապես Նախագծով պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակի, նրանց պաշտոնի նշանակման և ազատման, դասային աստիճաններ շնորհելու, պետական ծառայության կազմակերպման և ղեկավարման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերությունների հարցերը Նախագծից հանելու հարցը, քանի որ սահմանադրական օրենքի կարգավորման առարկան չպետք է ներառի այլ հարցեր, որոնք հնարավոր է կազմակերպել առանձին օրենքով:	**Ընդունվել է ի գիտություն**	**Նախագծում փոփոխություններ չեն կատարվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նպատակահարմար է Սահմանադրական օրենքով սահմանել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության կաքզմակերպման և ղեկավարման առանձնահատկություններ , որպես Պաշտպանի անկախ գործունեության ապահովման լրացուցիչ երաշխիքներ՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 193-րդ հոդվածի 6-րդ մասի:**

	53. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը անհրաժեշտ է խմբագրել այնպես, որ ընթերցողի համար պարզ և հասկանալի լինի, թե ով է Մարդու իրավունքների պաշտպանը:	**Ընդունվել է:**	**Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտպանը Սահմանադրության 191-րդ հոդվածի համաձայն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի**

			կատարելագործմանը»:
	54. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասին հանել վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու համար Ազգային Ժողովի համաձայնությունը ստանալու հարցը, քանի որ այն անհարկի ծանրաբեռնելու է Ազգային Ժողովի աշխատանքները յուրաքանչյուր վարչական իրավախախտման համար հարց հարուցելով:	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:**
	55. Նախագծի 26-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին կամ իրավասու պաշտոնատար անձին առաջարկում է պատասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները: Պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Պաշտպանի առաջարկը և արդյունքների մասին … ժամկետում տեղեկացնել Պաշտպանին: Եթե պաշտոնատար անձի արարքում առկա	**Ընդունվել է մասնակի**	**5-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ «5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկել պատասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, որի որոշմամբ կամ գործողությամբ**

	չեն հանցակազմի հատկանիշներ (առերևույթ հատկանիշներ), ապա Պաշտպանն իրավասու պաշտոնատար անձին առաջարկում է նրան ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ անհրաժեշտության դեպքում նշելով կարգապահական տույժի տեսակը: Պաշտպանի առաջարկը պաշտոնատար անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է: Պաշտոնատար անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Պաշտպանը պետք է տեղեկացվի անմիջապես: Պաշտպանի կողմից նշված կարգապահական տույժի տեսակը չընտրելու դեպքում իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է Պաշտպանին ներկայացնել համապատասխան հիմնավորում: Կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը պատասխանատվության միջոց կիրառելու առաջարկով դիմում է իրավասու վարչական մարմիններին:»:		**(անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները: Պատասխանատվության ենթարկելու առաջարկի հետ մեկտեղ Պաշտպանը կարող է առաջարկել կարգապահական տույժի տեսակը: Պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է քննարկել Պաշտպանի առաջարկը և արդյունքների մասին սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետում տեղեկացնել Պաշտպանին: Պաշտպանի կողմից առաջարկված կարգապահական տույժի տեսակը չընտրելու կամ անձին կարգապահական պատասխանատվության**

			չենթարկելու դեպքում դեպքում իրավասու պաշտոնատար անձը պարտավոր է Պաշտպանին ներ-կայացնել համապա-տասխան հիմնավորում: Կազմակերպության կող-մից մարդու իրավունք-ների կամ ազատություն-ների խախտում հայտնաբերելու դեպքում, եթե առկա են օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքեր, Պաշտպանը կարող է պատասխանատվության ենթարկելու առաջարկով դիմելիրավասու վարչական մարմիններին: »